

**2017թ. փետրվարին պրակտիկա անցած ուսանողների հետ
ֆոկուս-խմբերով հանդիպման արդյունքների
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

2017 թվականի փետրվարին ԵՊՀ ԻՄ տարբեր մասնագիտությունների 80-ից ավելի ուսանողներ, այդ թվում նաև ավարտական կուրսերի ուսանողներ մարզի տարբեր դպրոցներում անց են կացրել պրակտիկա: Պրակտիկայի արդյունավետության վերաբերյալ ՄԿՈԱ բաժնի մասնագետ Է.Կյուրեղյանը պրակտիկայի ավարտից հետո հանդիպումներ է ունեցել ֆոկուս-խմբերի հետ, անց է կացրել լրացուցիչ քննարկումներ, որոնց ընթացքում ձեռք են բերվել ուշադրության արժանի արդյունքներ:

Փետրվար ամսին պրակտիկա են անցել օտար լեզուների /անգլերեն և ֆրանսերեն/ ու մանկավարժության և հոգեբանության մասնագիտության ավարտական կուրսի ուսանողները:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության ուսանողների հիմնական մասը պրակտիկան անց են կացրել Իջևանի ավագ դպրոցում: Ըստ քննարկմանը մասնակից ուսանողների (այսուհետ՝ փորձագետ) դպրոցի ուսուցչական կազմը համալրված էր որակյալ կադրերով: Մասնակցելով փորձառու ուսուցիչների դասերին, պրակտիկանտները կարողացել են **շոշափելիորեն զգալ** իրենց մասնագիտության «հմայքն» ու դժվարությունները: Նրանք հավաստել են, որ ուսուցիչներն իրենց ուղղորդում էին, օգնում խորհուրդներով: Այն դասարանները, որոնցում ուսանողներն անց են կացրել իրենց պրակտիկան, ունեցել են անգլերեն լեզվի ուղղվածություն: Պրակտիկանտների զարմանքը և դժվարությունները հարուցված են եղել այն հանգամանքով, որ աշակերտներն ավագ դպրոց են եկել անգլերեն լեզվից չափազանց աղքատիկ գիտելիքներով: Մարզի բնակավայրերից մեկի դպրոցում, ըստ պրակտիկանտ-ուսանողի, անգլերենի իմացությունը պատշաճ մակարդակի չէր, ինչի պատճառով ինքն ի վիճակի չի եղել դասերն արդյունավետ անցկացնել: Սակայն, փորձագետի հավաստմամբ, աշակերտները ձգտում էին ցուցաբերում և լավ էին սովորում, հատկապես՝ տղաները: Չնայած աշխատակիցներից ստացած բացասական տպավորությանը, այնուհանդերձ փորձագետը գտնում է, որ պրակտիկան հնարավորություն էր, որպեսզի ինքն իրեն փորձարկի, ինքնահավաստվի, որ ավարտելուց հետո, հարկ եղած դեպքում կարող է աշխատել իր մասնագիտությամբ: Համոզվել է, որ որոշակի պայմանների բավարարման դեպքում, իրոք տիրապետում է մասնագիտությանը և կարող է աշխատանքնային պայմանագիր կնքել: **Նշենք նաև, որ մեր փորձագետների կարծիքով ուսումնական-գործնական և ապագա կարիերայի տեսանկյունից ավելի նպատակահարմար կլիներ, եթե պրակտիկան անցկացվեր ոչ միայն դպրոցում, այլև ուրիշ կազմակերպություններում ևս (օրինակ՝ բանկերում, տուրիստական գործակալություններում և այլն):**

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության ուսանողները պրակտիկան անց են կացրել Իջևանում, Մարիգյուղ, Սևքար, Գետահովիտ, Կիրանց գյուղերում: Շրջանցելով որոշակի դպրոցներից ստացած դրական կամ բացասական տպավորությունները (դա մեր նպատակների մեջ չի մտնում) և դիտարկելով հենց պրակտիկայի արդյունավետությունը, կարելի է ասել, որ փորձագետներն ընդհանուր առմամբ գոհունակություն հայտնեցին ինչպես պրակտիկայի անցկացման շրջանից, այնպես

Է նրա բովանդակությունից (հիշեցնենք, որ ֆոկուս-խմբերի հետ նախկին քննարկումների ժամանակ կարծիք էր հայտնվել, որ դասերին զուգահեռ պրակտիկան արդյունավետությամբ զիջում է դասերի ծանրաբեռնվածությունից ազատ ժամանակահատվածում անցկացված պրակտիկային): Հարկ է նշել, որ փորձագետներն արտահայտեցին մի շարք ուշագրավ նկատառումներ: Անգլերեն լեզվի պրակտիկանտների նման ֆրանսերեն լեզվի պրակտիկանտ-ուսանողները ևս գտնում էին, որ նպատակահարմարության տեսանկյունից ավելի օգտակար է, երբ **դպրոցից բացի պրակտիկա ացնեն նաև այլ կազմակերպություններում: Պրակտիկանտ-փորձագետները ցանկանում էին դպրոցների և ուսուցիչների կողմից ավելի մեծ վաստահություն, դասերին ստեղծագործաբար վերաբերվելու հնարավորության ընձեռում** (ինչպես դիպուկ նշեցին՝ «կառչած» չմնան դպրոցի առարկայական ծրագրի բովանդակությանը): Այն, ինչը թերևս ժամանակի հրամայականն է, մասնագիտության յուրահատկությունը, կրթական զարգացումների պահանջը: Կարծիք-ցանկություններ եղան **պրակտիկայի տևողությունը երկարացնելու վերաբերյալ**: Հիմնական փաստարկը կապված էր մասնագիտության (օտար լեզվի ուսուցիչ) յուրահատկության հետ, այն առումով, որ սեփական հմտություններն օգտագործելու և պրակտիկայի ընթացքում ավելին ձեռք բերելու համար ավելի շատ ժամանակ է հարկավոր:

Ինքնատիպ էր **«Մանկավարժություն և հոգեբանություն»** մասնագիտության պրակտիկանտների հետ քննարկումները, որոնք նախկին՝ 2016թ. նոյեմբերին անցկացրած քննարկումների յուրովի շարունակությունն էին: Այստեղ, մյուսների համեմատ ավելի հարուստ էր պրակտիկայի «աշխարհագրությունը». «Իջևան բժշկական կենտրոն» (հիվանդանոց), «SOS» մանկական-գյուղ, «ՀՕՖ»-ի գրասենյակ, Գեղարքունիքի մարզի Այգուր զյուղի դպրոց, «Հույսի կամուրջ» ՀԿ: Հարուստ ու բազմազան է եղել նաև պրակտիկանտների գործունեությունը: Դպրոցում մանկավարժական գործունեության կողքին, համապատասխան հասարակական կազմակերպություններում, զթասրտական հիմնարկություններում, նրանց առաքելության, կատարվող աշխատանքների համատեքստում ուսանողները հետազոտել են որոշակի հոգեբանական, սոցիալ-հոգեբանական խնդիրներ: Այսպես, օրինակ,

- Իջևանի հիվանդանոցի թերապևտիկ բաժանմունքում պրակտիկանտը հետազոտել է «Սրտանոթային հիվանդանոցի սուբյեկտիվ վերաբերմունքը սեփական հիվանդությանը» թեման: Ընդհանուր հետևություններից մեկը, որը կատարել է պրակտիկանտը, և որն իրեն ստեղծագործական գոհունակություն է պատճառել, յուրովի իմաստավորել ու ինքնահաստատել է մասնագիտորեն, այն է, թե նման հիվանդները, որպես կանոն ունենում են կյանքից հիասթափվածության տարբեր աստիճաններ:
- Հայ օգնության ֆոնդի («ՀՕՖ») գրասենյակում պրակտիկա անցած ուսանողը զբաղվել է երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների կրթական, առողջական, սոցիալական խնդիրների ուսումնասիրությամբ: Մասնակցել է նաև ընտանիքների հոգեկան զարգացման հարցերով զբաղվող «Մարտիկյան» կենտրոնի աշխատանքներին, նրանց հետ այցելել է աջակցություն ստացած ընտանիքներին, մասնագիտորեն քննարկել ու բացահայտել է ցուցաբերած օժանդակության արդյունքները:
- Առանձնակի ուշադրության արժանի երևույթ է այն, որ Գեղարքունիքի մարզի գյուղերից մեկի դպրոցում պրակտիկա անցած ուսանողը, որպես ապագա ուսուցիչ,

մանկավարժական փորձառության կողքին հետազոտել է աշակերտների վերաբերմունքն ուսման, գիտելիքներ ձեռք բերելու հանդեպ: Նա կատարել է դասալսումներ, հարցազրույցներ է ունեցել աշակերտների, ծնողների հետ, դիտել է դասի ընթացքում և դրանից դուրս մթնոլորտը: Այս ամենի ընթացքում, որպես հոգեբան, կատարել է որոշակի ընդհանրական հետևություններ: Մասնավորաբար, ակնհայտորեն ամրագրվել են ուսման հանդեպ սովորողների հետաքրքրվածության խիստ պակաս, որում «մեղքի իրենց բաժին» ունեն ինչպես ծնողները, այնպես էլ ուսուցչական կոլեկտիվը: Ըստ պրակտիկանտի, ծնողների մի մասն իրենք են անտարբեր երեխաների ուսման հանդեպ, իսկ ուսուցիչներից շատերի մոտ անբավարար են հոգե-բարոյական շարժառիթները: Մեծ մասը դպրոցում աշխատում են նյութական դրդապատճառներով և չունեն պատշաճ նվիրվածություն մանկավարժ-դաստիարակի գործունեությանը:

- «SOS» մանկական գյուղ-կենտրոնում պրակտիկան անցած ուսանողն աշխատել է 9-13 տարեկան երեխաների հետ, ուսումնասիրել է նրանց բնավորություն-ինքնագնահատականը, սույն խնդրով անց է կացրել ուսումնական աշխատանքներ, երեխաներին վարժեցրել է ինքնուրույն իրագործել ինքնագնահատումը՝ սեփական անձի զարգացման ու ինքնագարգացման նպատակներով:

Պրակտիկանտների այս խմբի մոտ գործնականում բացակայում էին կազմակերպչական խնդիրների վերաբերյալ դժգոհությունները: Գրեթե բոլոր փորձագետները հավաստեցին, որ տեղերում **իրենց վերաբերվել են պատշաճորեն, հնարավորություն է տրվել մանկավարժների հետ հավասար մասնակցել ու անցկացնել պարսպամունքները, մասնագետների հետ մասնակցել հոգեբանական-խմբային աշխատանքներին:** Բացառություն էր միայն ցանկությունը՝ *ավելացնել պրակտիկայի տևողությունը*: Փորձագետներից մեկը փաստարկում էր, որ իրենց պրակտիկայի անցկացումը երեք շաբաթով՝ երկուսի փոխարեն, ըստ որում ամառային արձակուրդների ընթացքում՝ 3-րդից 4-րդ կուրս փոխադրվելիս, ավելի արդյունավետ կանցնի:

Հոգեբան-մանկավարժների պրակտիկան, դրա հետ կապված քննարկումները հատկանշական և ուշադրության էին արժանի այնքանով, որքանով այստեղ մանկավարժական փորձառությունը զուգակցվում էր հետազոտական աշխատանքներով: Այն մի կողմից պահանջում է ինքնատիպ մոտեցում, լրացուցիչ կազմակերպչական ջանքեր, մյուս կողմից պարունակում է լրացուցիչ խթանիչ ուժ հետագա աշխատանքային գործունեությանը պատրաստ լինելու, աշխատանքի տեղավորվելու հարցերում:

Ընդհանրացնելով լրացուցիչ քննարկումների արդյունքները կարելի է ասել, որ.

- պրակտիկայից ստացած տպավորություններն ու գնահատականները համահունչ են 2016թ. նոյեմբեր-2017թ. հունվար ամիսների ընթացքում բոլոր մասնագիտությունների ֆոկուս-խմբերի հետ անցկացված ուսումնասիրության հետևություններին, կապված պրակտիկայի կազմակերպման ու անցկացման հետ,

- ընդհանուր դրական բարձր գնահատականների կողքին պրակտիկանտ-փորձագետները մատնանշում էին պրակտիկայի տևողության ու անցկացման ժամանակահատվածի քննարկման և, հնարավորինս, օպտիմալացման անհրաժեշտությունը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին